

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

26.02.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյան - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Ադրոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Վ.Դոխոյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

Վարչապետի կողմից տրված հանձնարարականներ

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`

ա/ համայնքների կողմից կառուցապատողներին տրամադրվող ՃՀԱ-ներում պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թ. 596-Ն որոշման թիվ 1 հավելվածի 5-րդ գլխի` նախագծման թույլտվության (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք) պարտադիր պայմանները և ՃՀԱ-ների տրամադրման ժամկետները:

բ/ համայնքների կողմից կառուցապատողներին տրամադրվող շինարարության թույլտվություններում պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թ.596-Ն որոշման թիվ 1 հավելվածի 6-րդ գլխի 100-րդ կետով նախատեսված թույլտվությունների տրամադրման ժամկետները` կախված կառուցվող օբյեկտների ռիսկայնության աստիճանից:

գ/ մշակել տեղական և ներհամայնքային ճանապարհների տեղական հումքով վերանորոգման այլընտրանքային ցածր ինքնարժեքով տարբերակներ:

դ/ համայնքների ղեկավարների հետ համատեղ մշակել վերանորոգվող ճանապարհներին զուգահեռ (հատկապես գյուղական բնակավայրերում) տնամերձերի պարիսպների և դարպասների վերանորոգման համար պարզունակ և արժեքով մատչելի նախագծային տարբերակներ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

ա/ ՀՀ ԿԱ Պետական գույքի կառավարման վարչությունից ստանալ Լոռու մարզի վարչական տարածքում գտնվող պետական գույքի ցանկը և նկարագրությունը ու տրամադրել շահագրգիռ կողմերին:

բ/ առաջարկել համայնքների ղեկավարներին մեկշաբաթյա ժամկետում աղքատացության ծախսերին համապատասխան պլանավորել եկամուտներ:

գ/ առաջարկել համայնքների ղեկավարներին ևս մեկ անգամ վերանայել համայնքների բյուջեները և օգտագործելով բոլոր ռեսուրսները հնարավորինս ավելացնել եկամուտները:

դ/ հետամուտ լինել հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց (500000 դրամ և ավելի), ինչպես նաև՝ վարձակալության տրամադրված հողի և գույքի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պարտքերի մարման գործընթացին և մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

ա/ գույքագրել, թե մարզում տեխնիկայի ընդհանուր պահանջարկը որքան է կազմում և քանի միավոր է անհրաժեշտ գյուղատնտեսական շուկան զարգացնելու համար և դրա հիման վրա ներկայացնել ծրագիր:

բ/ առաջարկել պոտենցիալ ներդրողներին իրենց բիզնես ծրագրով լուծելու որևէ համայնքի ռոտզման խնդիրը և դրա փոխարեն ներդրողի հետ քննարկել չօգտագործվող հողատարածք տրամադրելու հարցը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մ. Սայադյանին՝

ա/ գյուղական համայնքների ուսումնական հաստատություններում ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակել ծրագիր՝ պարզեցված եղանակով սպորտային խմբակների (դպրոցի ներսում կամ բակում) գործունեությունը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ուսումնասիրել մարզի հանրակրթական դպրոցներում սպորտդահլիճների առկայությունը, վիճակը (օգտագործվում է, թե՞ ոչ) և ֆիզկուլտուրա առարկայի ուսուցիչների մասնագիտական որակավորման համապատասխանությունը:

բ/ ձեռնարկել միջոցներ՝ մարզի դպրոցներում հեռավար (օնլայն) դասերի թվի ավելացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

գ/ ուսումնասիրել մարզի հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի և օտար լեզուների դասավանդման վիճակը, դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակավորման համապատասխանությունը: Ներկայացնել առաջարկություններ դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ :

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԲԱՆԴՅԱՆ